Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 24-ի N 1700 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Առանձին մարմիններում օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն, նախաքննություն, ինչպես նաև հարկային, մաքսային մարմիններում կամ դատախազությունում օրենքով վերապահված հսկողական գործառույթներ իրականացնող որոշակի շրջանակի անձանց կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նպատակով այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի համար կարող է տրամադրվել փոխհատուցում (այսուհետ՝ այլընտրանքային փոխհատուցում):

2. Այլընտրանքային փոխհատուցման ծախսերը հաշվարկվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան միջոցները նախատեսվում են սույն հավելվածով սահմանվող նորմաներին և կարգին համապատասխան՝ բյուջետային ֆինանսավորման հայտով ներկայացված առաջարկի առկայության դեպքում:

3. Այլընտրանքային փոխհատուցման ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսվում են սույն հավելվածի 1-ին կետում նշված հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող համապատասխան ծրագրային միջոցառումների ծախսերում և ըստ ծախսային բաղադրիչների՝ հատկացվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հետևյալ հոդվածներով.

1) 4212 - «Էներգետիկ ծառայություններ» հոդվածով՝ մասնավոր ավտոմեքենայի շահագործման դեպքում էլեկտրական շարժիչով ավտոմեքենայի լիցքավորման համար.

2) 4239 - «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով՝ ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերման համար.

3) 4264 - «Տրանսպորտային նյութեր» հոդվածով՝ մասնավոր ավտոմեքենայի շահագործման դեպքում վառելանյութի տրամադրման համար:

4. Այլընտրանքային փոխհատուցման ծախսի տարեկան նորմայի հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ հաշվարկային տվյալները՝

1) առաջիկա տարվա օրացուցային օրերի քանակը.

2) վառելանյութի օրական ծավալը՝ 2.0 լիտր (բենզին կամ դրան համարժեք այլ վառելանյութ).

3) էլեկտրաէներգիայի օրական ծախսը՝ 5.0 կվտ (էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենաների համար).

4) գինը՝ առաջիկա բյուջետային տարվա համար կանխատեսվող բենզինի գինը կամ էլեկտրաէներգիայի լիցքավորման միջին շուկայական սակագինը:

5. Սույն հավելվածով սահմանված տվյալների հիման վրա հաշվարկվում է այլընտրանքային եղանակով փոխհատուցման տարեկան ծախսի նորման մեկ հաշվարկային միավորի համար (այսուհետ՝ այլընտրանքային փոխհատուցման գումար)՝ հետևյալ բանաձևով.

Այլընտրանքային փոխհատուցման գումար = օրական ծախսվող վառելանյութի ծավալ (կամ էլեկտրաէներգիայի օրական ծախս) x 365 օր x գին (կամ սակագին):

6. Այլընտրանքային փոխհատուցման տարեկան ծախսի նորման որոշվում է մեկ միավորի հաշվարկային ցուցանիշը դեպի վերև կլորացնելու միջոցով:

7. Այլընտրանքային փոխհատուցումն իրականացվում է հետևյալ տարբերակներով՝

1) աշխատակցի կողմից մասնավոր ավտոմեքենայի շահագործման դեպքում՝

ա) վառելանյութի տրամադրում կամ լիցքավորման ծառայության ձեռքբերում,

բ) էլեկտրաէներգիայի լիցքավորում կամ լիցքավորման ծառայության ձեռքբերում.

2) ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերում:

8. Այլընտրանքային փոխհատուցման տարբերակների ընտրության, փոխհատուցման տրամադրման և ծախսերի հաշվառման պայմանները սահմանվում են տվյալ մարմնի ներքին կանոնակարգերով:

9. Ուղևորափոխադրման տրանսպորտային ծառայության ձեռքբերումն իրականացվում է տվյալ մարմնի կողմից գնման ընթացակարգերին համապատասխան ծառայության ձեռքբերման միջոցով:

10. Էլեկտրական շարժիչով աշխատող ավտոմեքենայի շահագործման դեպքում փոխհատուցումն իրականացվում է տվյալ ավտոմեքենայի մարտկոցի լիցքավորման կամ գնման ընթացակարգերին համապատասխան լիցքավորման ծառայության ձեռքբերման եղանակով:

11. Այլընտրանքային փոխհատուցման ծախսը առաջիկա տարվա բյուջեի նախագծում նախատեսելու նպատակով վերահաշվարկվում է՝ հիմք ընդունելով հաշվարկային տվյալների փոփոխությունը:

12. Սույն հավելվածի 1-ին կետում նշված մարմիններում տրանսպորտային ծախսերի այլընտրանքային փոխհատուցում ստացող օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն, նախաքննություն, ինչպես նաև հսկողական գործառույթներ իրականացնող անձանց (պաշտոնների) շրջանակը սահմանվում է մարմնի ղեկավարի կողմից ընդունված ներքին իրավական ակտով:

13. Փոխհատուցում ստացող անձանց (պաշտոնների) շրջանակը հաստատելու մասին իրավական ակտը ներառվում է յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացվող բյուջետային ֆինանսավորման հայտի փաթեթում:

14. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում սույն հավելվածով նախատեսվող յուրաքանչյուր մարմնի համար այլընտրանքային փոխհատուցման

ծախսը հաշվարկվում է տվյալ մարմնի կողմից բյուջետային ֆինանսավորման հայտի շրջանակներում ներկայացված թվով անձանց (պաշտոնների) համար:

15. Սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված մարմիններում այլընտրանքային փոխհատուցումն իրականացվում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անհատական իրավական ակտի հիման վրա: Այն մարմիններում, որոնց կառուցվածքում գլխավոր քարտուղարի պաշտոն նախատեսված չէ, այլընտրանքային փոխհատուցումն իրականացվում է օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պաշտոնատար անձի անհատական իրավական ակտի հիման վրա:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ